Նախագիծ
Երկրորդ ընթերցում
Լրամշակված տարբերակ

Կ-701[2]-30.07.2020-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել նոր 150.15-րդ հոդվածով հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 150.15. Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման, գազաբալոնների պարբերական վկայագրման եւ լցավորման պահանջները խախտելը

1. Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների (այսուհետ՝ գազաբալոնային սարքավորումներ) տեղադրման կամ գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիայի պարտադիր պահանջները կամ պայմանները խախտելը, եթե դրանք չեն առաջացրել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվություն՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրից երկուհարյուրապատիկի չափով:

2. Գազաբալոնային սարքավորումների տեղադրման եւ պարբերական վկայագրման կարգի պահանջների խախտմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված նմուշի փաստաթղթերի տրամադրումը կամ ավտոտրանսպորտային միջոցների եւ գազաբալոնների վերաբերյալ տվյալները էլեկտրոնային շտեմարան մուտքագրումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ գազաբալոնային սարքավորումների տեղադրման եւ վկայագրման իրավասություն ունեցող կազմակերպության պաշտոնատար անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրից հինգհարյուրապատիկի չափով:

3. Առանց էլեկտրոնային շտեմարանի տվյալների հետ նույնականացման, արդյունքում դրական եզրակացություն չստանալու դեպքում գազաբալոնների լցավորումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ գազալցավորման կայանի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Նույն խախտումը կրկին կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ կիրառված վարչական տույժի կրկնապատիկի չափով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 244.13-րդ հոդվածի 1-ին մասում «նախատեսված» բառից առաջ լրացնել «, 150.15-րդ հոդվածով» բառերը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ տարի հետո:

ՏԵՂԵԿԱՆՔ

Երկրորդ ընթերցում

Կ-701[2]-30.07.2020-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~**Հոդված 1.** «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնելնոր 150.11-րդ հոդվածով հետեւյալ բովանդակությամբ~~

Հոդված 1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնելնոր 150.15-րդ հոդվածով հետեւյալ բովանդակությամբ.

~~«Հոդված 150.11.Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման, գազաբալոնների պարբերական վկայագրման եւ լցավորման պահանջները խախտելը~~

«Հոդված 150.15.Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման, գազաբալոնների պարբերական վկայագրման եւ լցավորման պահանջները խախտելը

1. Սեղմված բնականկամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների (այսուհետ՝ գազաբալոնային սարքավորումներ) տեղադրման կամ գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիայի պարտադիր պահանջները կամ պայմանները խախտելը, եթե դրանք չեն առաջացրել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվություն՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջն կատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրից երկուհարյուրապատիկի չափով:

2. Գազաբալոնային սարքավորումների տեղադրման եւ պարբերական վկայագրման կարգի պահանջների խախտմամբ ՀայաստանիՀանրապետության կառավարության կողմից սահմանված նմուշի փաստաթղթերի տրամադրումը կամ ավտոտրանսպորտային միջոցների եւ գազաբալոնների վերաբերյալ տվյալները էլեկտրոնային շտեմարան մուտքագրումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ գազաբալոնային սարքավորումների տեղադրման եւ վկայագրման իրավասություն ունեցող կազմակերպության պաշտոնատար անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երեք հարյուրից հինգհարյուրապատիկի չափով:

~~Սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով նախատեսված խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում՝ առաջացնում է լիցենզիայի կասեցում՝ 1 տարի ժամկետով~~:

3. Առանց էլեկտրոնային շտեմարանի տվյալների հետ նույնականացման, արդյունքում դրական եզրակացություն չստանալու դեպքում գազաբալոնների լցավորումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ գազալցավորման կայանի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Նույն խախտումը կրկին կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ կիրառված վարչական տույժի կրկնապատիկի չափով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 244.13-րդ հոդվածի 1-ին մասում «նախատեսված» բառից առաջ լրացնել «, 150.15-րդ հոդվածով» բառերը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ տարի հետո:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» և «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻԻ (Կ-702-30.07.2020-ՊԱ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ կառավարություն	**Կ-701[1]-30.07.2020-ՏՀ-011/1 Հոդված 3, մաս 3**	«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ մասն անհրաժեշտ է շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքից բխող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ	Ընդունվել է	Ընդունվել է

			մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:		
2.	ՀՀ կառավարություն	Կ-701[2]-30.07.2020-ՏՀ-011/1 **Հոդված 1 և 2**	նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներում անհրաժեշտ է վերանայել նախատեսված համարակալումը («150.11-րդ»)՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում արդեն իսկ սահմանված է 150.11-րդ հերթական համարով հոդված: Միաժամանակ, Նախագծով լրացվող հոդվածի 2-րդ մասից հետո շարադրված «Սույն հոդվածի 1-ին և 2-րդ (...) 1 տարի ժամկետով:» և 3-րդ մասի «Նույն խախտումը (...) 1 տարվա ընթացքում:» պարբերություններն անհրաժեշտ է համարակալել՝ համապատասխանաբար փոփոխություն կատարելով հոդվածի մյուս մասերում: Միևնույն ժամանակ առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասում «չստանալու» բառից հետո լրացնել «դեպքում» բառը:	Ընդունվել է	Ընդունվել է

3.	ՀՀ կառավարություն	**Կ-701[2]-30.07.2020-ՏՀ-011/1** **Հոդված 1, մաս 2-րդ մաս**	Նախագծով լրացվող հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված խախտումը, որը կատարվել է կրկին անգամ՝ վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում՝ առաջացնում է լիցենզիայի կասեցում՝ 1 տարի ժամկետով: Այս առումով հարկ է նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ հոդվածով սահմանված են վարչական իրավախախտում կատարելու համար կիրառվող վարչական տույժերի տեսակները, որոնցում, որպես վարչական տույժի տեսակ, նախատեսված չէ լիցենզիայի կասեցումը: Բացի այդ, լիցենզիայի կասեցման հետ կապված հարաբերությունները կարգավորված են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում: Ելնելով վերոգրյալից՝ Նախագծի հիշյալ դրույթներն անհրաժեշտ է խմբագրել՝ համապատասխանեցնելով հիշյալ օրենքների դրույթներին:	Ընդունվել է	Ընդունվել է